ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0221Ն. 29.09.17

29 սեպտեմբերի 2017 թվականի թիվ 221 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ **Ներսես Երիցյան**

2017 թ. սեպտեմբերի 29
Երևան

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թ. սեպտեմբերի 29-ի թիվ 221 Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

1. «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կատարման գործընթացը

2017 թվականի տարեսկբից սկսած ՀՀ-ում արձանագրվում է տնտեսական աճի բարձր մակարդակ, որը պայմանավորված է համաշխարհային տնտեսության աճի վերականգնմամբ և ներքին պահանջարկի շարունակական աճով: Տարվա առաջին կիսամյակում արձանագրվել է 6.0% տնտեսական աճ, և ակնկալվում է, որ տարվա արդյունքում տնտեսական աճը զգալիորեն կգերազանցի ՀՀ կառավարության կողմից կանխատեսված և 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի հիմքում դրված 3.2% ցուցանիշը:

Տնտեսական աճի ձևավորման մեջ կարևոր դեր են ունեցել առաջարկի գործոնները՝ պայմանավորված արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում գրանցված արտադրողականության աճով: Ընդ որում, համախառն պահանջարկը նույնպես արագ վերականգնվել է, որին նպաստել են ինչպես արտաքին պահանջարկի, այնպես էլ ՀՀ ներքին պահանջարկի աճերը: Վերջինս պայմանավորված է մասնավոր սպառման ու մասնավոր ներդրումների աճերի վերականգնմամբ, որին նպաստել են նաև դրամավարկային ընդլայնող քաղաքականության արդյունքում աստիճանաբար նվազող վարկային տոկոսադրույքները և վարկավորման աճը:

Ուշագրավ է այն փաստը, որ ներդրումների աճն ուղեկցվել է տնտեսության արտահանելի ճյուղերին ուղղված մասնավոր ներդրումների գերակայությամբ, որը կարևոր է տնտեսության արտադրողականության և տնտեսական ներուժի զարգացման համար: Այս ձեռքբերումներն արտացոլվել են նաև արտահանման աճի 2017 թվականի զարգացումներում, որը պահպանելով վերջին տարիներին արձանագրված աճի տեմպերը, ըստ էության, փոխհատուցել է սպառման աճով պայմանավորված ներմուծման աճը: Ներմուծման աճի մեջ զգալի մասնաբաժին է կազմել մեքենա-սարքավորումների ապրանքախումբը, ինչը կարևոր նշանակություն ունի արտահանման և տնտեսական աճի ներուժի ավելացման համար:

Տնտեսական աճի կանխատեսվածից ավելի բարձր մակարդակի ձևավորումն ուղեկցվել է տարվա համար սպասվող հարկեր/ՀՆԱ ցուցանիշի նախորդ տարվա

[1] Սույն փաստաթղթում օգտագործված թվային տվյալները, բացառությամբ 2-րդ տողատակում բերվածից, վերցված են «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծից:

նույն՝ 21.2% մակարդակի պահպանմամբ, և առանց ԱԱՀ-ի վերադարձի ճշգրտված հարկեր/ՀՆԱ-ի 0.6 տոկոսային կետ աճով, որի պարագայում հարկային եկամուտները համախառն պահանջարկի վրա ունեցել են չեզոք ազդեցություն: Այդուհանդերձ, տարվա ընթացքում իրականացրած վարչարարական միջոցառումների արդյունավետության բարձրացման շնորհիվ հարկային քաղաքականության ոլորտում զգալի բարելավման միտումներ են նկատվել, որի մասին են վկայում մասնավորապես բյուջե հավաքագրվող հարկատեսակներին վերաբերող գերավճարների նվազումը, ինչպես նաև տնտեսվարողներին ավելացված արժեքի հարկի հետ վերադարձվող գումարների 0,5 տոկոս աճը:

Տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարումն ընթացել է ՀՆԱ-ում ծախսերի նվազման ուղղությամբ, և ակնկալվում է, որ տարվա արդյունքում ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 25.9%-ը նախորդ տարվա 28.0%-ի դիմաց: Այստեղ հարկ է նշել, որ շատ կարևոր է ՀՆԱ-ի մեջ կապիտալ ծախսերի անհրաժեշտ տեսակարար կշռի ապահովումը (ըստ ԱՎԾ հրապարակման հունվար-հունիսին նշված ցուցանիշը նվազել է 0,5 տոկոսային կետ), որը հատկապես տնտեսության ենթակառուցվածքների զարգացման միջոցով նպաստում է տնտեսական աճի կայուն և երկարաժամկետ հիմքերի ստեղծմանը:

Նշված զարգացումների ներքո գնահատվում է, որ 2017 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կկազմի ՀՆԱ-ի 3.6%-ը՝ 2.0 տոկոսային կետով զիջելով 2016 թվականի պակասուրդի փաստացի մակարդակը: Արդյունքում, 2017 թվականին ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա զսպող ազդեցություն:

Պակասուրդի առկայությունը, բնականաբար, հանգեցրել է ՀՀ կառավարության պետական պարտքի աճի, որը, ըստ գնահատականների, տարվա արդյունքում գերազանցելով պարտք/ՀՆԱ սահմանային ցուցանիշը կկազմի շուրջ 55%: Միևնույն ժամանակ, գների կայունությանն ուղղված ընդլայնող դրամավարկային քաղաքականության արդյունքում նպաստավոր պայմաններ են ստեղծվել նաև պետական ներքին պարտքի տոկոսադրույքների նվազման համար: Այսպես, ընթացիկ տարվա հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում տեղաբաշխված պետական կարճաժամկետ արժեթղթերի միջին տոկոսադրույքը կազմել է 6.23%՝ անցած տարվա նույն ժամանակահատվածի 7.95%-ի դիմաց, միջինժամկետ արժեթղթերի՝ 8.28%՝ նախորդ տարվա 11.43%-ի դիմաց, իսկ նույն ժամանակահատվածում տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 8.05% (առանց տեղաբաշխված 30 տարի ժամկետայնություն ունեցող արժեթղթերի) նախորդ տարվա 9.76%-ի դիմաց[2]:

Այսպիսով, ելնելով վերը նշված զարգացումներից, կարևորվում է պետական պարտքի կայունացման և մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված

2 Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տվյալները:

հարկաբյուջետային քաղաքականության բարելավման շարունակականության ապահովումը, որը զուգորդվելով կառուցվածքային բարեփոխումների արդյունավետ իրականացմամբ կարող է նախապայմաններ ապահովել տնտեսական կայուն աճի ձևավորման համար:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջնորդվելով միջնաժամկետում կայուն տնտեսական աճի ապահովման և արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի առանցքային շարժիչ ՀՀ կառավարության որդեգրած գերակա նպատակի իրագործման սկզբունքներով, ՀՀ կառավարությունը 2018 թվականին շարունակելու է կառուցվածքային բարեփոխումների իրականացման և տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպերի վերականգնման քաղաքականությունը: 2018 թվականին կանխատեսվում է ՀՆԱ-ի 4.5% իրական աճ, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը: 2018 թվականին տնտեսական աճը պայմանավորված կլինի ինչպես արտաքին զարգացումներով՝ մասնավորապես, Ռուսաստանի տնտեսական աճի վերականգնման և պղնձի համաշխարհային գների բարձր մակարդակների պահպանմամբ, այնպես էլ ներքին՝ ՀՀ-ում 2017 թվականին իրականացված մի շարք բարեփոխումների և դրամավարկային ընդլայնող քաղաքականության արդյունքում 2015 թվականից շարունակվող տոկոսադրույքների նվազման ազդեցությամբ:

Հատկանշական է, որ 2018 թվականի տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքում ՀՀ կառավարությունը ջանքերն ուղղելու է ներդրումային միջավայրի բարելավմանը՝ մասնավորապես, շարունակելով շեշտը դնել արտահանելի ճյուղերին ուղղված ներդրումների խթանման վրա: Տարվա համար կանխատեսվում է և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում ներդրումային ակտիվության աճ, ընդ որում՝ մասնավոր հատվածում կանխատեսվում է ավելի մեծ ներդրումային ակտիվություն: Արդյունքում 2018 թվականին համախառն պահանջարկի շարժիչ է հանդիսանալու ներքին պահանջարկը, նախատեսվել է սպառման և ներդրումների իրական աճ՝ 6.5-ական տոկոս: Այդուհանդերձ, չնայած նախատեսվում է ներդրումների աճ, սակայն, տնտեսական ներուժի աճի ապահովման տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի մեջ ներդրումների զգալիորեն ավելի բարձր մակարդակի ապահովումը, որը զուգակցվելով ներքին խնայողությունների համապատասխան բարձր մակարդակով՝ կապահովի նաև երկրի արտաքին հաշվեկշռվածության պահպանումը:

Ուղղորդվելով մակրոտնտեսական կայունության պահպանման ներքո պակասուրդի կրճատման քաղաքականության սկզբունքներով և այն զուգորդելով

տնտեսական բարեփոխումների շարունակականության ապահովման կարևոր նախապայմանի ապահովմամբ, 2018 թվականի համար նախատեսվում է ՀՆԱ-ում բյուջեի պակասուրդի նվազում՝ 2017 թվականին սպասվող 3.6 տոկոսի դիմաց ապահովելով ՀՆԱ-ի 2.7 տոկոսը: Վերջինս կարևոր նախապայման է պետական պարտքի կայունացման և աստիճանական կրճատման համար:

2018 թվականին կշարունակվի հարկաբյուջետային կոնսոլիդացումը՝ եկամուտների չեզոք, իսկ ծախսերի զսպող ազդակի դրսևորմամբ: Պետական բյուջեի եկամուտների մասով 2018 թվականի բյուջեի ծրագրի շրջանակներում ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների տեսակարար կշռի 2017 թվականի սպասվողի համեմատ ընդամենը 0,1 տոկոսային կետ աճ, իսկ առանց ԱԱՀ-ի վերադարձի՝ ճշգրտված հարկեր/ՀՆԱ-ն 2018 թվականին աճում է 0.4 տոկոսային կետով, ինչի պարագայում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 21.3 տոկոս:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի ծախսերի կատարման գործընթացին, ապա հաշվի առնելով պետական բյուջեի պակասուրդի շարունակական կրճատումը, ՀՆԱ-ում պետական ծախսերի նախատեսված նվազեցման իրականացումը առանց կապիտալ ծախսերի կրճատման կարևոր գործոն է երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման և պարտքի կայունացման համար:

Անդրադառնալով պետական պարտքին նշենք, որ շատ կարևոր ենք համարում պարտքի կառուցվածքի բարելավումը՝ մասնավորապես արտաքին պարտքը ներքին պարտքով փոխարինման միջոցով: Միևնույն ժամանակ կարևորում ենք կապիտալի շուկայի զարգացմանն ուղղորդված ներքին պարտքի կառավարման մեխանիզմների ներդրումը, մասնավորապես ներքին պարտքի գործիքակազմի ընդլայնման միջոցով:

Հարկ է նշել, որ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրում հաշվի են առնվել հնարավոր բոլոր ռիսկերն ու անորոշությունները, գնահատվել են հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում բյուջեի ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը բյուջեի հոսքերի վրա: Միևնույն ժամանակ, ողջունելի է հարկային ծախսերի գնահատման և դրա վերաբերյալ տեղեկատվության զետեղումը փաստաթղթում, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել տնտեսությունում առկա ռեսուրսների չափի և դրանց բաշխվածության վերաբերյալ:

Այսպիսով, գնահատվում է, որ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրի իրականացումը համախառն պահանջարկի վրա կունենա զսպող ազդեցություն, որի պարագայում 2018 թվականի տնտեսական աճի ապահովման հիմնական բեռը ընկնում է լայնածավալ կառուցվածքային բարեփոխումների վրա: Այդ ամենը, զուգակցվելով հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի շարունակականության ապահովմամբ, կնպաստեն մակրոտնտեսական կայունությանը՝ հիմքեր ստեղծելով տնտեսական աճի համար երկարաժամկետ հատվածում: